ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

20.12.2025-23.12.2025թ. Եգիպտոսի Արաբական Հանրապետություն գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը՝**
   Գևորգ Պապոյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**
   ՀՀ էկոնոմիկայի նախարար

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**
   Եգիպտոսի Արաբական Հանրապետություն, ք. Կահիրե

   2025 թվականի դեկտեմբերի 20–23-ը

4. **Հրավիրող կողմը՝**

Եգիպտոսի Արաբական Հանրապետության պլանավորման, տնտեսական զարգացման և միջազգային համագործակցության նախարարություն

5. **Գործուղման նպատակը՝**

Հայաստանի Հանրապետության և Եգիպտոսի Արաբական Հանրապետության միջև երկկողմ առևտրատնտեսական և ներդրումային համագործակցության զարգացման նպատակով, մասնավորապես՝

- համանախագահելու ՀՀ–ԵԱՀ միջկառավարական համատեղ հանձնաժողովի 6-րդ նիստը,
- բարձր մակարդակի երկկողմ հանդիպումներ անցկացնելու,
- Հայաստանի ներդրումային միջավայրն ու ռազմավարական նախաձեռնությունները ներկայացնելու,
- գործարար կապերի խթանման և հստակ համագործակցության ուղղությունների նախանշելու:

6. Քննարկված թեմաները՝

Գործուղման ընթացքում քննարկվել են հետևյալ հիմնական թեմաները.

- երկկողմ առևտրի և ներդրումային համագործակցության ընդլայնում,
- արտահանման խթանում և շուկաների փոխադարձ հասանելիություն,
- արդյունաբերություն և ագրոարդյունաբերություն,
- գյուղատնտեսություն և սննդի վերամշակում,
- վերականգնվող էներգետիկա և էներգաարդյունավետություն,
- լոգիստիկա և տնտեսական գոտիներ, այդ թվում՝ Սուեզի ջրանցքի տնտեսական գոտի,
- դեղագործություն և առողջապահություն,
- բարձր տեխնոլոգիաներ, թվայնացում և ստարտափ էկոհամակարգ,
- կրթություն և մարդկային ռեսուրսներ,
- զբոսաշրջություն,
- «Խաղաղության խաչմերուկ» և TRIPP նախաձեռնություններ:

Քննարկված թեմաները ձևավորել են Հայաստանի և Եգիպտոսի միջև տնտեսական համագործակցության համապարփակ օրակարգ՝ ուղղված ոչ միայն առևտրաշրջանառության ծավալների ավելացմանը, այլև տնտեսական կապերի կառուցվածքային խորացմանը: Առանձնահատուկ ուշադրություն է դարձվել արտահանման խթանման մեխանիզմներին, արտադրական և վերամշակող ոլորտներում ներդրումների ներգրավմանը, ինչպես նաև շուկաների փոխադարձ հասանելիության ապահովմանը՝ տեխնիկական, սանիտարական և ֆիտոսանիտարական պահանջների շրջանակում:

Քննարկումների ընթացքում շեշտվել է արդյունաբերության և ագրոարդյունաբերության ոլորտներում համատեղ նախագծերի իրականացման կարևորությունը, այդ թվում՝ տեղական հումքի օգտագործմամբ արտադրության կազմակերպումը Հայաստանում և արտահանման ուղղորդումը դեպի Եգիպտոս և

երրորդ երկրների շուկաներ: Վերականգնվող էներգետիկայի և էներգաարդյունավետության ոլորտում անդրադարձ է կատարվել ներդրումային հնարավորություններին և տեխնոլոգիական համագործակցությանը:

Առանձին քննարկվել են լոգիստիկ և ենթակառուցվածքային ուղղությունները՝ հատկապես Սուեզի ջրանցքի տնտեսական գոտու շրջանակում հնարավոր համագործակցությունը, ինչպես նաև բարձր տեխնոլոգիաների, կրթության, զբոսաշրջության և մարդկային կապիտալի զարգացման հարցերը: Քննարկումների առանցքային տարր է կազմել նաև «Խաղաղության խաչմերուկ» նախաձեռնության ներկայացումը՝ որպես տարածաշրջանային տնտեսական համագործակցության և կապակցվածության նոր հարթակ:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը՝

- ՀՀ–ԵԱՀ միջկառավարական համատեղ հանձնաժողովի 6-րդ նիստի համանախագահություն, որի ընթացքում ներկայացվել է ՀՀ տնտեսական իրավիճակը, արտահանման ռազմավարությունը (2025–2030թթ.) և համագործակցության ոլորտային առաջնահերթությունները:
- Երկկողմ հանդիպում ԵԱՀ պլանավորման, տնտեսական զարգացման և միջազգային համագործակցության նախարարի հետ՝ առևտրի, ներդրումների, արդյունաբերության, գյուղատնտեսության, վերականգնվող էներգետիկայի, լոգիստիկայի և զբոսաշրջության ուղղություններով համագործակցության խորացման նպատակով:
- Երկկողմ հանդիպում ԵԱՀ արտաքին առևտրի և ներդրումների նախարարի հետ, որի ընթացքում քննարկվել են B2B ձևաչափով գործարար հանդիպումների կազմակերպումը, դեղագործական արտադրության և զբոսաշրջության ոլորտներում գործակցությունը, ինչպես նաև Եգիպտոսում TUMO կենտրոնի ստեղծման հնարավորությունը:
- Երկկողմ հանդիպում ԵԱՀ գյուղատնտեսության նախարարի հետ՝ ագրոարդյունաբերության, սննդի և խմիչքների արտադրության մեջ

ներդրումային հնարավորությունների, արտահանման և ջրասակավ պայմաններում գյուղատնտեսության զարգացման թեմաներով:

Բոլոր համապատասխան հանդիպումների ընթացքում ներկայացվել են «Խաղաղության խաչմերուկ» նախաձեռնությունը և դրա տնտեսական ու տարածաշրջանային նշանակությունը, ինչպես նաև փոխանցվել է հրավեր՝ մասնակցելու 2026 թվականի մայիսին նախատեսվող «Խաղաղության խաչմերուկ» ներդրումային գագաթնաժողովին:

Գործուղման շրջանակում կազմակերպվել է ընդունելություն Եգիպտոսի Արաբական Հանրապետությունում Հայաստանի Հանրապետության դեսպանությունում, որին մասնակցել են երկու երկրների գործարար շրջանակների ներկայացուցիչներ: Ընդունելության ընթացքում ներկայացվել է Հայաստանի ներդրումային միջավայրը, ինչպես նաև գործող խթանիչ մեխանիզմները և ներդրումային հնարավորությունները:

ՀՀ–ԵԱՀ միջկառավարական համատեղ հանձնաժողովի 6-րդ նիստի ընթացքում նախարար Գևորգ Պապոյանը հանդես է եկել ելույթով, ներկայացնելով Հայաստանի տնտեսական զարգացման ընթացիկ միտումները, իրականացվող կառուցվածքային բարեփոխումները, ինչպես նաև արտահանման խթանման ռազմավարությունը 2025–2030 թվականների համար: Նիստի ընթացքում քննարկվել են համագործակցության հնարավոր ուղղությունները՝ ընդգրկելով առևտուրը, ներդրումները, արդյունաբերությունը, գյուղատնտեսությունը, էներգետիկան, տեխնոլոգիաները և ծառայությունների ոլորտը:

Երկկողմ հանդիպումների ընթացքում մանրամասն քննարկվել են ոլորտային համագործակցության հստակ հնարավորությունները: Արտաքին առևտրի և ներդրումների նախարարի հետ հանդիպման ընթացքում շեշտը դրվել է գործարար շրջանակների միջև ուղիղ կապերի ստեղծման վրա՝ B2B հանդիպումների, համատեղ ցուցահանդեսների և գործարար առաքելությունների միջոցով, ինչպես նաև անդրադարձ է կատարվել դեղագործության և զբոսաշրջության ոլորտներում համագործակցության

զարգացման հեռանկարներին: Նույն հանդիպման ընթացքում հայկական կողմը առաջարկել է դիտարկել Եգիպտոսում TUMO կենտրոնի ստեղծման հնարավորությունը՝ որպես կրթության և մարդկային կապիտալի զարգացման ներդրում: Գյուղատնտեսության նախարարի հետ հանդիպման ընթացքում քննարկվել են ագրոարդյունաբերության զարգացման հարցերը, սննդի և խմիչքների արտադրության ոլորտում ներդրումային հնարավորությունները, արտահանման ուղղությունները, ինչպես նաև ջրասակավ և չոռոգվող պայմաններում գյուղատնտեսության զարգացման լուծումները:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը՝

- Ստորագրվել է ՀՀ–ԵԱՀ միջկառավարական համատեղ հանձնաժողովի 6-րդ նիստի արձանագրությունը:
- Կողմերը պայմանավորվել են ակտիվացնել առևտրի և ներդրումների խթանման գործիքները, ընդլայնել գործարար շփումները և մշակել ոլորտային համագործակցության հստակ մեխանիզմներ:
- Կողմերը համաձայնություն են հայտնել շարունակել աշխատանքները՝ համապատասխան հուշագրերի և գործնական ծրագրերի մշակման ուղղությամբ (արտահանում, ներդրումներ, դեղագործություն, տեխնոլոգիաներ, գյուղատնտեսություն):

Միջկառավարական համատեղ հանձնաժողովի նիստի արդյունքներով ստորագրվել է համապատասխան արձանագրությունը, որով ամրագրվել են կողմերի պայմանավորվածությունները երկկողմ համագործակցության հիմնական ուղղությունների վերաբերյալ: Արձանագրությունը ներառում է առևտրի, ներդրումների, արդյունաբերության, գյուղատնտեսության, էներգետիկայի, տեխնոլոգիաների, առողջապահության, կրթության և այլ ոլորտներում համագործակցության զարգացման համաձայնեցված մոտեցումները:

Կողմերը պայմանավորվել են ակտիվացնել գործարար կապերը, խթանել ներդրումային ծրագրերի մշակումը, ինչպես նաև շարունակել աշխատանքները համապատասխան հուշագրերի, գործնական ծրագրերի և ինստիտուցիոնալ համագործակցության մեխանիզմների ձևավորման ուղղությամբ:

9. Ստորագրությունը, ամսաթիվը՝

29.12.2025

Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2023 թվականի մարտի 23-ի
N 326-Ն որոշման

Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թվականի
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշման

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը՝ **ՀՀ էկոնոմիկայի նախարարություն**

2.Գործուղման մասին իրավական ակտի համարը՝ **ՀՀ վարչապետի N 1177-Ա որոշում առ 18.12.2025թ.**

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)՝

Գևորգ Պապոյան - ՀՀ էկոնոմիկայի նախարար

(թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում)

4. Գործուղման ժամկետները՝ **2025 թվականի դեկտեմբերի 20-23-ը**
5. Գործուղման վայրը՝ **Եգիպտոսի Արաբական Հանրապետություն (Կահիրե)**

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեով արտասահմանյան պաշտոնական գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին:
1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

---

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)
(ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը)

[■] **ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը**

[ ] բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Գևորգ Պապոյան	Ընդամենը (դրամ)
Ճանապարհածախս	Ավիաճառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)	էկոնոմ դաս	
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	373,450	373,450
Գիշերավարձ	Վճարը 1 գիշերվա համար (Կահիրե- USD)		
	Վճարը 1 գիշերվա համար (դրամ)		
	Գիշերների քանակը		
	Ընդամենը (դրամ)	-	-
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (Կահիրե- USD)	104	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	39,676	
	Օրերի քանակը (20, 21, 22, 23 դեկտեմբեր -2025թ.)	4	
	Ընդամենը (դրամ)	158,704	158,704
Այլ ծախսեր	Հակահամաճարակային		
	Նմուշառումների վճար		
	Մուտքի արտոնագրի վճար		
	Այլ ծախսեր /ՊՊՍ սրահ/	* 10,000	10,000
Ընդամենը ծախսեր (դրամ)		542,154	542,154
Նախահաշվարկով վճարված (դրամ)		158,704	158,704
Ընդամենը վճարման ենթակա (դրամ)՝ որից		***383,450***	***383,450***
Ավիատոմսի գումար (դրամ)		373,450	373,450
ՊՊՍ Սրահ (դրամ)		10,000	10,000

***18.12.2025թ.** ՀՀ ԿԲ արտարժույթի միջին փոխարժեք՝ 1 USD 381.5

Գլխավոր քարտուղար
/Գլխավոր ֆինանսիստ/՝ ՀԱՅԿԱՋ ՆԱՍԻԲՅԱՆ

Գլխավոր հաշվապահ *Մոնիկա Ղարսյան*

Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2023 թվականի մարտի 23-ի
N 326-Ն որոշման
Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թվականի
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշման

Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը՝ **ՀՀ էկոնոմիկայի նախարարություն**

2.Գործուղման մասին իրավական ակտի համարը՝ **ՀՀ վարչապետի N 1177-Ա որոշում առ 18.12.2025թ.**

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)՝

Ժակ Հակոբյան - ՀՀ ԷՆ Միջազգային համագործակցության վարչության պետ

(թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում)

4. Գործուղման ժամկետները՝ **2025 թվականի դեկտեմբերի 20-23-ը**

5. Գործուղման վայրը՝ **Եգիպտոսի Արաբական Հանրապետություն (Կահիրե)**

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝ Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեով արտասահմանյան պաշտոնական գործուղումների համար նախատեսված միջոցների հաշվին:

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)
(ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը)

[■] **ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը**

[ ] բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Ժակ Հակոբյան	Ընդամենը (դրամ)
Ճանապարհածախս	Ավիաճառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)	էկոնոմ դաս	
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	371,413	371,413
Գիշերավարձ	Վճարը 1 գիշերվա համար		
	Վճարը 1 գիշերվա համար (դրամ)	-	
	Գիշերների քանակը		
	Ընդամենը (դրամ)	-	-
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (Կահիրե- USD)	104	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	39,676	
	Օրերի քանակը (20, 21, 22, 23 դեկտեմբեր -2025թ.)	4	
	Ընդամենը (դրամ)	158,704	158,704
Այլ ծախսեր	Հակահամաճարակային		
	Նմուշառումների վճար		
	Մուտքի արտոնագրի վճար		
	Այլ ծախսեր /ՊՊՍ սրահ/		-
Ընդամենը ծախսեր (դրամ)		530,117	530,117
Նախահաշվարկով վճարված (դրամ)		158,704	158,704
Ընդամենը վճարման ենթակա Ավիատոմսի գումար (դրամ)		371,413	371,413

***18.12.2025թ.** ՀՀ ԿԲ արտարժույթի միջին փոխարժեք՝ 1 USD 381.5

Գլխավոր քարտուղար
/Գլխավոր ֆինանսիստ/՝ ՀԱՅԿԱՋ ՆԱՍԻԲՅԱՆ

Գլխավոր հաշվապահ *Մոնիկա Ղարսյան*

Հավելված № 3
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի №1230-Ն որոշման
Օրինակելի ձև

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը — ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարություն

2. Գործողման մասին իրավական ակտի համարը — ՀՀ վարչապետի 18.12.2025թ. № 1177-Ա որոշում

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը) — Լիլիթ Սարոյան, Արտաքին կապերի վարչության պետ

(թվարկել՝ պատասխանատվություն գործողության դեպքում)

4. Գործողման վայրը — Եգիպտոսի Արաբական Հանրապետություն (Կահիրե)

5. Գործողման ժամկետները — 20.12-23.12.2025թ.,

6. Գործողման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝ — 2025թ. ՀՀ պետական բյուջե

1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)
2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)
(ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը)

□ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործողման անհատական իրավական ակտով տվյալ գործողման փաստացի կատարված ծախսերի հատուցման սահմանի համաձայն

Ծախսի տեսակը			*Ընդամենը*
Ճանապարհածախս	Ավիաճառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)	Էկոնոմ դաս	Էկոնոմ դաս
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	**272650**	**272650**
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)		
	Վճարը 1 օրվա համար (դրամ)		
	Օրերի քանակը		
	Ընդամենը (դրամ)	**0**	**0**
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	104	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	39676	
	Օրերի քանակը	4	
	Ընդամենը (դրամ)	***158704***	***158704***
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար		
	Մուտքի արտոնագրի վճար		
	Այլ ծախսեր ասպահովագրական ծախսեր		
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		***431354***	***431354***

1$= 381.5

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը, ամսաթիվը: Ա.Երիցյան

19.12.2025թ.

Հավելված N 2
ՀՀ վարչապետի N 326-Ն որոշման

«Հավելված N 3 ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշման

Օրինակելի ձև

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը ՀՀ ԿԳՄՍՆ

2. Գործուղման մասին իրավական ակտի համարը ՎՈ 1177-Ա

3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը) Անգելինա Հովհաննիսյան՝ բաժնի պետ

(թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում)

4. Գործուղման վայրը՝ Եգիպտոսի Արաբական Հանրապետություն /Կահիրե/

5. Գործուղման ժամկետները՝ դեկտեմբերի 20-23-ը

6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝

1) 2025թ. ԿԳՄՍՆ-ին հատկացված պետական բյուջեի միջոցների հաշվին՝

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը (ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)

(ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը)

☐ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

☐ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		Անգելինա Հովհաննիսյան		Ընդամենը (հազ. դրամ)
Ճանապար-հածախս	Ավիաճառայության տեսակը	Էկոնոմ դաս		
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	***281489***		***281489***
Գիշերա-վարձ	Վճարը 1 օրվա համար (դոլար)	156		
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	43569		43569
	Օրերի քանակը	3		
	Ընդամենը (դրամ)	***131607***		***131607***
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (դոլար)	104		
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	39673		39673
	Օրերի քանակը	4		
	Ընդամենը (դրամ)	***158692***		***158692***
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար			
	Այլ ծախսեր (.....)			
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		***571788***		***571788***

Ծանոթություն: Նախնական վճարվել է 0 ՀՀ դրամ, ենթակա է վճարման 571788 ՀՀ դրամ:

Արտարժույթի միջին փոխարժեքն առ 19.12.2025թ.
1 դոլար = 381.47 դրամ

ԿԳՄՍՆ գլխավոր քարտուղար՝ **ՀԱՍՄԻԿ ՀԱԿՈԲՅԱՆ**

«Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը — ՀՀ առողջապահության նախարարություն
2. Գործուղման մասին իրավական ակտի համարը — N 1177-Ա 18.12.2025թ.
3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը) (*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*) — ՀՀ ԱՆ միջազգային հարաբերությունների վարչության օտարերկրյա ներդրումների ներգրավման բաժնի պետ Հասմիկ Սաֆարյան
4. Գործուղման վայրը — Եգիպտոսի Արաբական Հանրապետություն ք.Կահիրե
5. Գործուղման ժամկետները — 2025թ դեկտեմբերի 20-23-ը
6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝
1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը (*թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն*) — Օրապահիկ, Գիշերավարձ Ճանապարհածախս
2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը (*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

□ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը

□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		*Հասմիկ Սաֆարյան*	*Անուն, ազգանուն 2*	**Ընդամենը** (հազ. դրամ)
Ճանապարհածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)	281489.0		281.5
	Ավիատոմսի արժեքը (դրամ)			0.0
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	USD 115.0		0.0
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	43878.25		0.0
	Օրերի քանակը	3		
	Ընդամենը (դրամ)	131634.75		131.6
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	USD 104.0		0
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	39,681.2		0.0
	Օրերի քանակը	4		
	Ընդամենը (դրամ)	158724.8		158.7
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար			
	Մուտքի արտոնագրի վճար			
	Այլ ծախսեր (նկարագրել)			
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)		571848.6		571.9

Կուրսը՝ 24.12.2025թ-ի դրությամբ՝ 381.55 ՀՀ դրամ

Գլխավոր ֆինանսիստի ստորագրությունը, ամսաթիվը (ստորագրություն) 24.12.2025

Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն
որոշման

Օրինակելի ձև

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը՝ Վարչապետի աշխատակազմ
2. Գործուղման մասին իրավական ակտի համարը՝ N 1177 - Ա
3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը) Ալիսա Հայրապետյան, Արտաքին կապերի վարչության գլխավոր մասնագետ

(*թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում*)
4. Գործուղման վայրը՝ Եգիպտոսի Արաբական Հանրապետություն (Կահիրե)
5. Գործուղման ժամկետները՝ 20.12.2025-23.12.2025
6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝
1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(*թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն*)

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը՝ ԱՅՈ
(*ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան*)

(*ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը*)

☐ ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը՝ ԱՅՈ

☐ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը		*Անուն, ազգանուն 1*	*Անուն, ազգանուն 2*	*Անուն, ազգանուն 3*	*Անուն, ազգանուն ...*	**Ընդամենը** (հազ. դրամ)
Ճանապար-հածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս, բիզնես դաս)	Ալիսա Հայրապետյան				
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	281 489 ՀՀ դրամ				
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	115 ԱՄՆ դոլար				
	Վճարը 1 օրվա համար (դրամ)					
	Օրերի քանակը	3				
	Ընդամենը (դրամ)	345 ԱՄՆ դոլար				
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	104 ԱՄՆ դոլար				
	Վճարը 1 օրվա համար (դրամ)					
	Օրերի քանակը	4				
	Ընդամենը (դրամ)	312 ԱՄՆ դոլար				
Այլ ծախսեր	Հակահամաճարակային նմուշառումների վճար	0				
	Մուտքի արտոնագրի վճար	0				
	Այլ ծախսեր (*նկարագրել*)	0				
Ընդամենը ծախսեր (հազ. դրամ)						

Ստորագրությունը, ամսաթիվը: 25.12.2025թ.,

Հավելված N 2
ՀՀ վարչապետի 2023 թ. մարտի 23-ի
N 326-Ն որոշման
Հավելված N 3
ՀՀ վարչապետի 2018 թ.
սեպտեմբերի 19-ի N 1230-Ն որոշման

Հ Ա Շ Վ Ե Տ Վ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

ԳՈՐԾՈՒՂՄԱՆ ԾԱԽՍԵՐԻ ՎԵՐՋՆԱՀԱՇՎԱՐԿԻ ՄԱՍԻՆ

1. Մարմնի անվանումը՝ **ՀՀ արտաքին գործերի նախարարություն**
2. Գործուղման մասին իրավական ակտի համարը՝ **ՀՀ վարչապետի N 1177-Ա որոշում, առ 18.12.2025թ.**
3. Անունը, ազգանունը, զբաղեցրած պաշտոնը (մասնագիտությունը)
Դավիթ Միրզախանյան- ՀՀ արտաքին գործերի նախարարության, Միջին Արևելքի և Աֆրիկայի վարչության Մերձավոր Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի բաժնի պետ
(թվարկել՝ պատվիրակություն գործուղելու դեպքում)
4. Գործուղման վայրը՝ **Եգիպտոսի Արաբական Հանրապետություն, ք. Կահիրե**
5. Գործուղման ժամկետները՝ **2025թ. դեկտեմբերի 20-ից 23-ը ներառյալ**
6. Գործուղման ծախսերի ֆինանսավորման աղբյուրը՝ **Հայաստանի Հանրապետության 2025 թվականի պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության արտաքին գործերի նախարարությանը հատկացված միջոցների հաշվին**
1) հրավիրող կողմի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(թվարկել՝ ճանապարհածախս, գիշերավարձ, օրապահիկ և այլն)

---

2) պետական բյուջեի միջոցների հաշվին հատուցվող ծախսերը
(ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2335-Ն որոշմանը համապատասխան)

(ընդգծել ծախսերի փոխհատուցման տարբերակը)
V ա. փաստացի կատարված ծախսերը հիմնավորող փաստաթղթերի հիման վրա՝ դրանցով սահմանված չափով, բայց ոչ ավելի, քան ցանկով նախատեսված չափերը
□ բ. գործուղման անհատական իրավական ակտով տվյալ գործուղման փաստացի կատարված ծախսերի հատուցման պահանջի համաձայն

Ծախսի տեսակը			Ընդամենը
Ճանապար-հածախս	Ավիածառայության տեսակը (էկոնոմ դաս , բիզնես դաս)	էկոնոմ դաս	
	Ավիատոմսի արժեքը (դրամ)	**278,910.45**	**278,910.5**
Գիշերավարձ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	$ 115	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	43,867.9	
	Օրերի քանակը	3	
	Ընդամենը (դրամ)	**131,603.7**	**131,603.7**
Օրապահիկ	Վճարը 1 օրվա համար (արտարժույթով)	$ 104	
	Վճարը 1 օրվա համար (դրամ)	39,676	
	Օրերի քանակը	3	
	Ընդամենը (դրամ)	**119,028**	**119,028**
Ընդամենը ծախսեր			**529,542.2**